

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՊԱՍՄԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐԷԻ

---

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ  
ԲԱԲԳԷՆ Ծ. Վ. ԿԻՒԼԷՍԵՐԵԱՆ  
Ի ԴԳՐԵՉԱՆՈՒՅ

(Արտատուք լուսն և ԲԱՆԱՍԷՐ և Հանդէսէն)

«... Բոլոր ազգին և Ստամբուլու քաղաքին  
աչ քարով Պատրիարք տնտեսեալ էաք ու

ԳՐԻԳՈՐ ՊՏՐԲ. ՊԱՍՄԱՃԵԱՆ  
(Էջ 117)



ՊԱՐԻՍ

Տպագրութիւն « Բանասէր »

1908

Պատմաճեհան Գրիգոր Պատրիարքի Յիշատակարանին նկատմամբ հարկ եղած բանասիրական տեղեկութիւնները տուած ենք հրատարակութեանս առաջին երեսներուն մէջ։ Այս տեղ դիտել կուտանք թէ Յաւելուած մըն ալ կցեցինք Յիշատակարանին վերջը, որ շատ հետաքրքրական է — կարեւոր համարեցինք նաեւ Յիշատակարանին համեմատ ճշդել Պատմաճեհանի կեանքին գլխաւոր հանգրուանները եւ ընդհանուր տեսութեամբ մըն ալ բացատրել ֆոնակութեան կամ կաթոլիկութեան խնդրին բնութիւնը։

Ներողութիւն կը խնդրենք տպագրական այն սխալներուն համար, որոնք սպրդած են այս հրատարակութեան մէջ մեր կամքէն անկախ կերպով։ Կը ցաւինք որ կարելի չեղաւ վերջին անգամ համեմատել տպագրուածը ձեռագրին հետ։

Փափաքելի է որ այսպիսի յիշատակարաններ կարելի եղածին չափ անթերի հրատարակութիւն մը ունենան ոչ միայն տպագրութեան, այլ մա՛նաւանց նիւթերու ամբողջութեան կողմէն։ Կը խոստովանինք որ այս երկու անսակէտով ալ թերի է այս Յիշատակարանը, որուն ամբողջը թերեւս գտնուի ուրիշ — հաւանաբար Ս. Ղազարու — Մատենադարանի մը մէջ։

Տարակոյս չկայ՝ որ շատ կարեւոր է այսպիսի յիշատակարաններու հրատարակութիւնը։ Վասն զի Ժ.Զ — Ժ.Է դարերէն առդին՝ Ազգ. եկեղեցական պատմութիւնը մութի մէջ է բոլորովին եւ թերի, նոյն իսկ Չամչեանի քով, որ խեղաթիւրումներ ալ ըրած է ըստ իւր սովորութեան Ժամանակակից աղբիւրներու անաղարտ եւ հարազատ հրատարակութիւնը պիտի լուսաբանէ տիրող մթնութիւնը եւ պիտի ուղղէ խեղաթիւրումները։

Մենք այնպէս համոզուած ենք, որ լուրջ ուսումնասիրութիւններու առարկայ պէտք է ըլլան այդ դարերու ղեպերն ու դէմքերը։ Եւ այս համոզումով է, որ փորձ մ'ըրինք սկսելով կոլոտ Յովհաննէս Պատ-

րիաբերէն. որ հսկառակ մեր ծրագրին ու բաղձանքին ամրողջական գործ մը չեղաւ նիւթերու կողմէն. որովհետեւ շատ բաներ կը պակսէին ինձ եւ զեռ կը պակսին:

Կ'ըսպասենք, մանաւանդ կը խնդրենք յանուն բանասիրութեան եւ պատմութեան, որ Մեծ. Բանասէրներ թող հաճին հրատարակել ինչ որ ունին այդ դարերուն վերաբերութեամբ: Այո՛, ակնկաւորոյց կ'ըսպասենք որ Վենետիկի Միսիթարեանց ուսումնասէր Հայրերը հրատարակեն Թոմաս Պատրիարքի եւ Քէօմարճեանց Երեմիա Չէլէպիի գործերը. կ'ըսպասենք որ Երուսաղէմի Ս. Յսկորայ Մատենադարանին մէջ զբաւնուած թանկագին յիշատակարաններ, մենագրութիւններ, պատմութիւններ, օրագրութիւններ, կենսագրութիւններ, որոնք կը վերաբերին Պարոտէր Գրիգոր Պարք.ի, Շղթայակիր Գրիգոր Պարք.ի, եւ այլոց գործերուն եւ կեանքին. հրատարակուին. զոր օր. Դարանագրի Գրիգոր Վրդ ի պատմութիւնը եւ այլն. Երուսաղէմ հարուստ է նաեւ որիչ so-փիւնաններով, ինչպէս. Կոնդակ, թղթակցութիւն. Ֆէրման, արձանագրութիւն, ձեռագրերու յիշատակարան, որմիանկար եւ այլն: Կ'ըսպասենք որ լոյս տեսնեն Զաքարիա Պարք.ի (Կաղզուանցի) պատմութիւնը, Սարգիս Դպրի ձեռագիրը, եւ զեռ ուրիշներ: Այո՛, կ'ըսպասենք որ Էջմիածին եւ Երուսաղէմ, Վենետիկ եւ Վիեննա, ինչպէս նաեւ հետաքրքիր բանասէրներ բանաւ իրենց թանգարաններն ու գանձարանները, իրենց մատենադարաններն ու արկղները եւ լոյս աշխարհ բերեն պատմութեան խառն, բայց պատուական նիւթերը:

Մենք այս համոզումով հրատարակեցինք Պատմական Գրիգոր Պատրիարքի Յիշատակարանը, ո՛րչափ ալ աննշան համարուի այս անոնք քով, որոնց հրատարակութեան կ'ըսպասենք:

Բ. Վ.

1907 Սեպտեմ. 13

Կ. ՊՈԼԻՍ

Ղալաֆիա — Ս. Լուսաւորիչ

## ՊԱՍՏԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐԺ

Այս Յիշատակարանին պարբերական հրատարակութեան առթիւ կը խորհէի, որ Պատմաճեանի կենսագրութիւնն ալ գրեմ կարելի եղածին չափ մանրամասն. եւ ստուգիւ բաւական բան ալ գրեցի. ըսյց Յիշատակարանիս հրատարակութենէն ետքը փոխեցի միտքս, նկատելով որ Յիշատակարանիս պակաս մասերը մութի մէջ կը թողուն Պատմաճեանի կեանքին ինչ ինչ կողմերը. ասկից զատ ամբողջական եւ մանրամասն կենսագրութիւն մը գրելու համար պէտք է ուսումնասիրել իր ժամանակն ու բարքերը եւ կարգ մը ուրիշ խնդիրներ. իսկ այսպիսի աշխատութեան մը ձեռնարկելու համար պէտք է սպասել, որ լոյս տեսնեն ժամանակակից այլ եւ այլ աղբիւրներ, որոնց քանի մը հատը յիշատակեցինք ԱԶԴԻ մէջ:

Առ այժմ բաւական կը համարինք Պատմաճեանի կենսագրութեան գլխաւոր հանգրուանները նշանակել եւ ընդհանուր տեսութեամբ մըն ալ զաղափար տալ ֆոնակութեան խնդրին վրայ, որ կը յուշուէր Հայ Եկեղեցւոյ շուրջը:

Ա. Գրիգոր Վարդապետ Պատմաճեան կամ Աստուածատուրեան, ծն. 1715, բնիկ Կ. Պոլսեցի (Սամաթիացի) է, եւ թոռն է Սամաթիոյ Ս. Դէոդոս եկեղեցւոյն Աւագերեց Տ. Մովսէս քահանայի (էջ 41, 47, 118), իր հօրեղբայրն է Տ. Մարտիրոս քահանայ, որոնք իրենց տոհմային եւ անձնական արժանիքներով նշանաւոր եղած են (էջ 118):

Բ. Պատմաճեան Երուսաղէմի Ս. Աթոռոյն ծառայութեան նուիրուած է իր թարմ հասակին մէջ. Շղթայակրի օրէն, 1737-1774, (էջ 89, 91, 93, 98, 119): Այդ միջոցին մէջ մասնաւորապէս կը յիշէ ինքզինքը իբր Հրաւիրակ եւ Վերակացու Երուսաղէմի ուխտաւորաց նաւին (էջ 25, 64, 90): Իսկ Երուսաղէմի Թէոդորոս Պատրիարքի 1755 Ապրիլ 23 թուակիր պաշտօնագրէն կ'երեւի թէ Գրիգոր Վարդ. իր Աթոռակալն էր Երուսաղէմի մէջ, ուսկից ելած էր Էջմիածին երթալու եւ եպիսկոպոսանալու համար (էջ 39): — Հաւանաբար այս միջոցին (1755—1757) պէտք է դնել Պատմաճեանի նուիրակութիւնը ի Թօխաթ (Նւգոկիս) եւ Մարզուանքներու շնորհակալութիւնը (էջ 39, 40):

Գ. Պատմաճեան Երուսաղէմէն ելլելէ ետքը կը նուիրակէ եւ հառա-  
նաբար չկարենալով Էջմիածին երթալ՝ կը մնայ Պոլիս եւ Երուսաղէմի  
Պատրիարքին Փոխանորդ (Վեֆիլ) կը Նշանակուի 1757ին՝ Թէոդորոս Պատ-  
րիարքի կողմէն (էջ 40), եւ կը հաստատուի նոյն պաշտօնին մէջ 1762ին՝  
կարապետ Պատրիարքի կողմէն, պաշտօն մը՝ զոր վարեց մինչեւ 1765,  
այսինքն մինչեւ իր Պատրիարքութեան առաջին տարիները, եւ որ ետքը  
յանձնուեցաւ Սարգիս Սարկաւազին (էջ 66, 104)։

Պատմաճեան իր փոխանորդութեան ատեն, 1763ին, չինեւ կտաայ  
Երուսաղէմաւունը իր հիմակուան տեղը (էջ 13)։

Դ. Պատմաճեան Երուսաղէմի պատրիարք կ'ընտրուի 1761 Սեպտեմ-  
բին. իբր յաջորդ Թէոդորոս Պատրիարքի, բայց չընդունի՝ տեղի տալով  
իր ընկերակից կարապետ Վարդին, որ Երուսաղէմի Միաբանութեան  
ընտրելին էր (էջ 11-12, 47)։

Ե. Պատմաճեան Կ. Պոլսի Պատրիարք կ'ընտրուի 1764 Մայիս 13,  
Եւ. օր, դեւ վարդապետ, երբ Պոլսի մէջ կային 12 Եպիսկոպոս եւ 8  
Մայրապոյն վարդապետ (էջ 105)։ Այս պաշտօնը թէւ նախապէս չընդու-  
նիւր թէ՛ պատրիարքական ծախքերու (էջ 23-25, 90), թէ՛ եպիսկոպոս  
չըլլալուն համար (էջ 12, 15, 108, 117), եւ թէ՛ տնոր համար որ ինքը  
չկրնար չափուիլ յոյն եւ լատին ազգերու հետ, մանաւանդ չկրնար դրած  
ծախսել իր վերայ կաթողիկոսեան (էջ 51-52, 112), բայց նախնին եւ  
մանաւանդ Մուրատեան ամիրաներու պնդումին վրայ ապամայ կը հա-  
ւանի (էջ 16, 48, 50, 60, 73, 98, 102, 105, 120), եւ Սիմէօն Կթդ.  
1765 Սեպտեմ. 10 թուակիր կոնգակով կ'արտօնէ, որ Պատմաճեան միայն  
իր Պատրիարք վարդապետ եպիսկոպոսական թափ դնէ Պատարագի ա-  
տեն (էջ 45)։

Զ. 1772 Փետր. 22, Դ. օր, Պատմաճեան կը հրաժարի պաշտօնա-  
պէս, բայց չընդունուի իր հրաժարականը (էջ 95)։ Վերջապէս կը պնդէ  
եւ կը հրաժարի 1773 Նոյեմբերի վերջը (ըստ Զամչեանի՝ Նոյ. 28), եւ  
կը քաշուի Իսկիւտարի վանքը, ուր կը մնայ քիչ ժամանակ ամիս տասն և  
(էջ 34)։

Է. Պատմաճեան պատրիարքութենէ եւ իր հակառակորդներուն թշ-  
նամանքէն ու նեղութենէն ազատուելու համար կ'ուզէ Երուսաղէմ եր-  
թալ կամ Պոլսի մէջ առնել մը քաշուիլ, երբ այս ծրագիրը չյաջողի՝  
Թէքրիտաղի առաջնորդութիւնը կ'ուզէ, բայց այս ալ քիչ յառաջանայ և  
(էջ 58, 91-92, 111-113)։ Վերջապէս Կիպրոսի Առաջնորդութիւնը կ'ուզէ  
եւ կ'երթայ նոյն Այս պաշտօնը կը վարէ իբրեւ ամիս տասն և  
(էջ 34),  
ըստ Զամչեանի 1774 Յուլ. 28 — 1775 Սեպտ. 1)։

Ը. Բայց Պատմաճեան նեղուած իր գլխէն անցած դէպքերէն, կ'ու-  
րոշէ Արեւմուտք (Սևրոպա) անցնիլ, եւ ձմեռնային եղանակի մէջ ծովային  
երկար նամարդութենէ ետքը կը հասնի Վնէժ (Վենետիկ), եւ քիչ ժամանակ

ամբողջ հինգը կը մնայ ինն, մասնաւորապէս մինչեւ 1776 Օգոստոս։ Անկից ամենաւ սիրովն կը հրաւիրուի Հոռովմ (էջ 34-35), ուր կը մնայ սիրբեւ ամբողջ իննը, եւ անկից ալ կուգայ Անքոնա ծովեզերեայ քաղաքը՝ 1777 Ապրիլի մէջ եւ կը մնայ եոն «վեց տարւոյ չափ» մինչեւ 1782։

Պատմաճեւան շատ կը նեղուի Անքոնայի մէջ աի կողմանէ մասնաց եւ փամբագութեանց աւարովհասեւ լատիներէն չէր գիտեր որ լատին եւ կեղեցի երթար, իսկ Հայերը միայն փոքր մասաւ մը եւ քահանայ մը աւնէին, իսկ Բաղարի վերամանաւ վեհապետից» (== Փրօփականայի) վեհապետի կ'երթայ 1782 Ապրիլին, ուր սէր մը անպիշտականութիւն կը վայելէ «ի վանքեցւոց հայոց» (Ս. Ղազարոս Միաբանութեւնէն), մանաւանդ Ստեփանոս Բաղարի, ինչպէս նաեւ Սեղբոսեան Յովնանիս աղայէն (էջ 35-36)։

Թ. վեց եօթը (2) ամիս մտքը Անքոնայ կը վերադառնայ (') 1784 Մարտի մէջ իջուածք մը կ'ըզգեսունէ Պատմաճեւանը եւ կը խնամուի Փրօփականայի հոգածութեամբ, ադի ըստ որում հոգարարածք էին եկեղեց ամենից եկեղեցականաց արք ի յարեւելիցս (էջ 26, 36, 94, 100)։ Իր Ողջունագիրներէն մէկուն մէջ կ'ըսէ թէ հինգ տարիէ ի վեր իրը կ'իսկանէ կենդան կոճը՝ անկողնի կը ծառայէ. ուստապառ է, ծառեկերը կ'ըստ, ակոսները թափած, լեզուն ծանրացած, սղէթափ, ալքերը տկար, ականջները ցաւոտ, բոլոր մարմինը զոզոյցաւն, հալած եւ մաշած (էջ 59, Հմտութիւն 64, 92, 96, 121)։

Ահա մեր Յիշատակարանին համեմատ Պատմաճեւանի կենսագրութեան ծանօթ հանգրուանները՝ ձշգիր չենք գիտեր թէ ո՛րչափ մնաց վեհապետի մէջ (')։ Իր ողջունագիրները, որ 1789 Մարտ 30 թուականը կը կրեն, տեղեւը չեն նշանակուած, քայց գրուած պիտի լիլան Անքոնայէն. որովհետեւ 1789 Սեպտ. 4 թուականի նամակ մը ունի Պատմաճեւան Անքոնայէն ուղղուած Հոռովմի մէջ ձեռնագրիչ Ստեփան եպոս. Ավթանդիկանի (Տե'ս Յաւեդուածը), ուր կ'ըսէ թէ իր ալքերը տկարացած են եւ տարիքն լմա՞ն 74 է։ Արդ՝ եթէ 1782 Ապրիլի վերջը գացած է վեհապետի եւ մնացած է

\*) Ուրիշ կողմէ սա տեղեկութիւնները կան Ստեփանոս Աբրահայր 1782 Ապրիլ 24ին նամակ մը գրած է Երուսթիւն Արքեպոսին, ի Թրեքտո, որուն մէջ կ'ըսէ. «Եղած լաւը յայտարար հասանի տատ յիշգրտայն Գերապետա Գրիգոր վարդապետի, որ զայն բնակիլ աստ վեց եօթն ամիս ըստ հրամանի Սուրբ Ժողովոյն»։

Իսկ իր 1782 Մայիս 18ին գրած նամակին մէջ կ'ըսէ. «Զողջայն ձեր մասուցի Գերապետա Գրիգոր վարդապետին, որ դեռ կայ ի վանս մինչև գոցէ յայտարար տուն բռնակութեան ի քաղաքին արովհետեւ քան ի մի ամիս կամի բնակիլ առաջ»։

Այս տեղեկութիւնները կը հաստատեն թէ Պատմաճեւան վեհապետի գալով Երուսթիւն Ս. Ղազարի մէջ հիւրընկալուած է Միթիթաբեանց կողմէն եւ ետքը վեհապետի մէջ տուն մը բնակած է։ Վեհապետի բնակութիւնը սփեց եօթ ամիս» = «քան ի մի ամիս» նշանակուած է նախապէս, բայց չենք գիտեր ճշտութեամբ ո՛րչափ անց հոն, ուսկից ամէն պարագայի մէջ Անքոնա վերադարձած է։

հոն վեց եօթ ամիս, ըսել է որ նոյն տարուան Հոկտ. - Նոյեմբերին վերա-  
դարձած կ'ըլլայ Անքոնա եւ ա'լ մնացած հոն մինչեւ իր վերջին շուշը:

Կենսագրական այս գլխաւոր գիծերու մէջ կր պատկերանայ գոր-  
ծունեայ եւ խոռվալից կեանք մը, որ նշաւակ եղած է ժամանակի կրօնա-  
կան խնդիրներուն եւ մոլեռանդութեան: Հայ եւ Լատին եկեղեցիներու  
դաւանութեանց շուրջը կը յուզուէին այդ խնդիրները: Այն պատեն Վա-  
տիկան եւ Ֆրանսա մեծ կշիռ ունէին Կ. Պոլսի մէջ: Հայոց Եկեղեցոյն  
չուրջը կը նորոգուէին ունիթոսական էին փորձանքներ, չէրդ զարու-  
ակիղէն, օրոնք բաւական կ'ընտոտ հանգամանք մը առած էին հեազեմե-  
եւ Կոլոս հազիւ յաջողած էր հաշտ քաղաքականութեամբ մը հասկար-  
տեցներ միտքերը եւ հեռացնել փորձանքները կարելի եղածին չափ  
Այս մասին հարկ եղածը գրած ենք ԿՈՒՈՏԻ մէջ:

Նախեան, Կոլոսի յաջորդը, շարունակեց իր վարդապետին քաղա-  
քականութիւնը: Բայց անոր չափ չ'յաջողեցաւ: Վասն զի Հայոց մէջ  
թուեալ պահպանողականներ, աշխարհական թէ եկեղեցական, քիչ չէին.  
եւ ասոնք չէին հասկընար Պատրիարքներուն այդ ընթացքը կամ թէ  
չէին ուզեր հասկընար, վասն զի բոլորովին անշահախնդրական չէր ի-  
րենց ընթացքը:

Եթէ պահպանողականք միայն եկեղեցւոյ շահը մտածէին՝ անշահա-  
ղժուար պիտի չըլլար համաձայնութիւնը Նախեան՝ Կոլոսի չափ բախ-  
տաւոր չեղաւ: Պատրիարքական Աթոռի վրայ, հրաժարումներ, անտե-  
քտեցութիւններ կամ հեռացումներ վրդովեցին իր կեանքը եւ ընդհատեցին իր  
տեւական գործունէութիւնը: Բայց ձերուհի Աստուածարանը միշտ հեղի-  
նակ մարդն էր. պատկառելի էին իր շուքն ու անունը: Սակայն գործե-  
լու համար աւելի թարմ եւ կորովի Պատրիարք մը պէտք էր: Այն ատեն  
թէ եւ Կ. Պոլսի մէջ ջախջախեալ Եպիսկոպոս եւ անքը Մայրապոյն Վարդա-  
պետներ կային (էջ 105, հմտ. Չամչեան Գ. էջ 873), բայց քիչեր յար-  
մար էին Պատրիարքութեան: Նախեան կ'ուզէր որ Պրուսայի Լեաֆոնոր-  
Սամուէլ եպս. ըլլար իր յաջորդը, եւ ասոր համար շատ աշխատեցաւ.  
բայց ի վեր, օրովհետեւ Սամուէլ յայտնապէս բռնաւ Կ. Պոլսի պատ-  
րիարքութիւնը իմ Վիճակին մէկ պառակն հետ չեմ փոխեր (էջ 14):  
Սամուէլէն ետքը ամէնէն յարմարը Պատմաճեանը կը գտնէին. բայց այս  
ալ հրաժարեցաւ, եւ ձերուհին Նախեան այս մերժումներու հանդէպ դաւա-  
նութեամբ կ'ըսէր. Պատրիարքութիւնը այսչափ ունարդ բա՞ն մը եղաւ.  
որ ամէնքն ալ կը կը մերժեն (Չամչեան, կոյն. ակն). Սակայն՝ թախան-  
ձանք, արիպում, գործակցութիւն, խոստում եւ այլն, բռնադատեցին Պատ-  
մաճեանը, որ ընդունի Կ. Պոլսի Պատրիարքութիւնը, եւ առջի օրէն իսկ  
սկսաւ գծուարութեանը գախիլ, ոչ, միայն ֆրանկութեան խնդիրը կը  
գծուարացնէր իր դիրքը, այլ նաեւ ներքին խռովութիւններ կային:

Պէտք է խոստովանիլ որ ինքն Պատմաճեան տեղի տուած է իր դէմ գրգռուած ասեւլութեան, ներքին խռովութիւններու պատճառին Վասն զի չէ կրցած կաթոլիկութեան խնդրին մէջ իր նախորդներուն քաղաքականութիւնը այնպէս բարձր բռնել, որ ինքն կասկածելի չդառնար իր գործնական ընթացքը եւ իր քարոզները պիտի կրնային մեծապէս օգնել խաղաղ քաղաքականութեան մը մշակումին: Բայց ինչպէս կ'երևի, ինքը տկար Հայ Եկեղեցւոյ ոգին թարգմանելու մէջ, մինչ իր գլխաւոր թշնամին, Գասպար Ամիրայ, աւելի ճարտար յանուն Եկեղեցւոյ ճարտարութեան փորձէն (էջ 101), հետզհետէ կը յաղթուի կրօնական վիճաբանութեան մէջ եւ կասկածելի կը դառնայ ուսման աստիճաններէն յաւակնոտութիւններուն առջեւ, հակառակ իրեն շտայլուած աստուածաբան (էջ 39, 47, 48), գիշնական (էջ 42) եւ զերիմաստ (էջ 46) տիտղոսներուն, որոնք աւելորդ պաճուածութիւններու տպաւորութիւնը կ'ընեն Ասկից զառ՝ Պատմաճեան չափազանց բարութեան համարմէք թոյլ եւ կոտարեկապէս դիւրամեան բնատրութեամբ վարդապետ մըն է, որ չկրնար եթէ ոչ կոլորած եւ Շղթայակրի, գոնէ Նայեանի չափ ճարտարութիւն ցոյց տալ կաթոլիկութեան խնդրին մէջ, եւ ասելի կ'ըլլայ նոյն իսկ իր քարեկամներուն, որոնց գլուխն էր Գասպար Ամիրայ, ետքը իր սոսկալի հակառակորդը, Եւ որովհետեւ ասեւլութիւնը՝ երբ անհաշիւ կիրքէն բղիժամէն բռն կը մոռնայ Պատմաճեանի բոլոր ծառայութիւնները, բոլոր բարի կողմերը մոռցուեցան կիրքերու մէջ եւ անոնց տեղ չհասուեցան չարք մը ամբաստանութիւններ, որոնց համեմատ Հայոց Պատրիարքը յանցապարտ կ'ըլլար Ազգի եւ Եկեղեցւոյ առջեւ, կառավարութեան առջեւ եւ նոյն իսկ իր անձին առջեւ:

Եւ Պատմաճեան իր իսկ վկայութեան համեմատ կը զրպարտուէր սա պատճառներով. .

1. Իբր թէ արքայութեան առեւ իսլամ եղած եւ ետքը Երուսաղէմ եւ ուրիշ տեղեր մնալէ ետքը՝ եկեր Պատրիարք եղեր է:

2. Զայս ապացուցանելու համար «թիփառեալ էս կ'ըսեն եղեր, եւ նոյն իսկ ըսողներէն մին, անշուշտ նոյն ինքն Տէր Մանուէլ, յայտարարեր է թէ չի կնոջէս ունիմ զտեղեկութիւնս»:

3. Իբր թէ Սառաֆեան Սարգիս եւ Պրուսայի Առաջնորդ Սամուէլ եպիսկոպոսներուն ինքը 800 քառակ փող տուած եւ Խաւիթա զրկած ըլլայ, որպէս զի հոն դպրոցներ բանան եւ ինքը Պոլսէն մարդ զրկէ հոն «վասն ուսանելոյ զլատինականս»:

4. Իբր թէ Նալեանէն իրեն քով աւանդ մնալած ըլլայ երկու սնտուկ լի՝ վնէժական սոկիններով, զորս փոխանակ կառավարութեան յանձնելու իւրացուցած ըլլայ:

5. Իբր թէ բոլոր հայ ազգը հնազանդեցուցած ըլլայ Հոռովի Պապին:



6. Իբր թէ քրիստոնեայ թագաւորութեանց յաղթութեան եւ տօնոց հաւատքին պայծառութեան համար աղօթքներ ընել տուած ըլլայ միշտ:

7. Իբր թէ բռնի իսլամացած հայերը փախցընել տուած ըլլայ քրիստոնեայ երկիրներ, որպէս զի ապահով ըլլան:

8. Նոյն իսկ եկեղեցիները մզկիթ ընել տուած կ'աւ արիւ խորաւ ըլլայ. վերջապէս իբր թէ ինքը Ֆռանկացած ըլլայ (էջ 53-55):

Այս ամբաստանութիւններուն իրական գոյն մը տալու համար ամէն միջոցի գիմեցին, որպէս զի Պատմաճեան նեղուի եւ անարգութիւն Զոր օր, ժամանակի սովորութեան համեմատ՝ պատրիարքանալու համար եղած ծախքերը, որ առաջ երուսաղէմի վանքէն կը վճարուէր, եւ այսպէս Ս. Յակոբայ գանձանակէն վճարուած էին Կոլոտի եւ Նալեանի պատրիարքութեանց ծախքերը, Պատմաճեանէն պահանջուեցան. բայց Գասպար Ամիրայ խոտաղաւ եւ 10 տարուան հին մուրհակով մը 8000 զրուշի պարտաւորեց Պատմաճեանը, եւ որովհետեւ զայն չուէր՝ գրաւեց անոր յիշատակները, զորոք պատրաստել տուած էր ան Ս. Յակոբի համար (էջ 23-25, 90): Թողունք ուրիշ հազար տեսակ թշնամանքներն ու լուտանքները, Գասպար Ամիրայ իր գործիքներուն եւ գործիչներուն ձեռքով ընկճեց Պատմաճեանը եւ կազմակերպեց այդ ամբաստանութիւնները, որոնցմէ ոմանք իրենց քաղաքական հանգամանքով կրնային դժուարաբանել Պատրիարքին գիրքը հանդէպ Կառավարութեան, քանի որ իբր անհաւատարիմ կ'ամբաստանուի (յօդ. 5-6), մինչ Պատմաճեան հաւատարիմ էր եւ կ'արտայայտէր զայն (էջ 18, 20):

Գալով ամբաստանութեանց կրօնական գոյնին, Պատմաճեան կաթողիկէն չէր, Այս Յիշատակարանի մէջ տեղ տեղ աչքի զարնող կաթողիկոսութեան համար նպաստաւոր տողեր (չոր օր, էջ 27, 29, 32-33, 37, 118) եւ ամբողջ Յիշատակարանը շատ ետքը գրուած են, այսինքն այն տառն երբ ինքը հալածուած եւ տարագիր, Փրօփոկանտայի կողմէն կը խնամուէր: Գանի որ էջմիածնեցիք ազատամիտ չեն (էջ 31) եւ ինքը՝ Պատմաճեան՝ իբր թէ Ն. Լամբրոնացիի պէս համաքրիստոնէական միութիւն մը կը ջատագովէր Վասիկանի քիթին եւ ասպնջական հողածութեան տակ եւ կը լսէր Զաքարիա Պատրիարքի քաղաքականութեան արդիւնքով ի գործ դրուած խտուածիւնները կաթողիկոսութեան դէմ, ա'լ ծխրած ծերացած վիճակի մը մէջ, հեռուէն հեռու, ուրիշ հերպ չէր կրնար արամաբանել: Այս իրողութեան համար ամէնէն փոքրիկ ապացոյց մըն է այն բացատրութիւններուն ամբողջը, զոր տուած է Հայ Եկեղեցիի մասին (Տե՛ս Յաւելուածը) եւ մա'նաւանդ այդ բացատրութիւններուն վերջը կցուած եւ Ավթանտիւեանի ուղղուած մատը:

Պատմաճեան իրեն ուղղուած ամբաստանութիւններու ներքեւ չմարդ միայն կը հերքէ զանոնք ընդհանուր կերպով, այլ նաեւ իր եւ իր

գլխաւոր հակառակորդին մէջ եղած անկամաձայնութեան պատճառը կ'ուզէ բացատրել տարբեր իրողութիւններով (էջ 101) եւ խստիւ կը դատաւարտէ զանոնք:

Պատմաճեան կ'ամբաստանէ զանոնք, թէ

1. Պօղիկեան աղանդին հետեւող են, եւ այս իրողութեան վկայած են նոյն իսկ Նալեան եւ Սամուէլ եպօ. (էջ 61, 63, հմտ. էջ 101):

2. Նաչի եւ պատկերի բազմութեան գէմ կը խօսին եւ ամուսնական ճիւղահամարն ու կապը շատ խիստ կը գտնեն եւ կ'արհամարհեն եկեղեցական բաները (էջ 78, 79, հմտ. էջ 84):

3. Մատաղը կ'ուտեն եւ մնացած ոսկորներուն վրայ թաղման կարգ կը կատարեն (էջ 70-71, հմտ. էջ 33):

4. Եկեղեցականները կը կողոպտեն եւ կ'արհամարհեն (էջ 78-79):

5. Աղքատներու համար զրամ կը ժողովեն եւ կ'իւրացնեն (էջ 70, 72, 78, 79):

6. Եկեղեցւոյ ներքին գործերուն կը խառնուին (էջ 51, 103) եւ եկեղեցւոյ մէջ յատուկ տեղեր կ'ընտրեն կենալու (էջ 79):

7. Զափազանց փառասէր են եւ կ'ըսպասեն որ պատրիարքներ չողորդեն իրենց, հակառակ պարաղային կ'անարգեն զանոնք. զոր օր. ոտքի վրայ կ'ըսպասեցընեն (էջ 29, 82) եւ երբ բարկանան շուն կ'ըսեն՝ նոյն իսկ կաթողիկոսին (էջ 70, 78-80):

8. Միջեւի կ'ըլլան, որպէս զի եկեղեցականութիւն ձեռք բերեն (էջ 80). ամիրայ կ'ըսուին որ անիրաւութիւն ընեն. որովհետեւ ամիրայ կը նշանակէ անիրաւ (էջ 87):

Այս ամբաստանութիւնները թէեւ ծայրէ ի ծայր լուրջ չեն, բայց անիրաւ ալ չեն, եւ Պատմաճեան ծանր կիրպարանք մը կուտայ ատոնց իր սրտի ցաւերուն մէջ, անցեալի վրայ իր զառն անդրադարձութիւններուն մէջ, իր առանձնական հեծումներուն մէջ, որոնց վրայ կ'առուցած է իր Յիշատակարանը: Բայց պէտք է դիտել, որ այս հեծեազին տուեալները մէջ Պատմաճեանի ցաւերուն կեդրոնը Մուրատեան Պաղատասար Ամիրայի եղբայրն է. որուն անունը երբեք չտար, այլ կ'ակնարկէ անոր՝ խորհրդապետ, արեւ, ակն եւ այլն բառերով: 1774ին Կ. Պոլսի մէջ Մուրատեանց ծախքով հրատարակուած ՆԱՐՆԿԻ մը ճակատին վրայ կը տեսնենք թէ ծերունի Պաղատասար ամիրայի եղբայրն է Մանեւի Գաւապար ամիրայ (°) — Գաւապար Ամիրայ, ինչպէս որ կ'երեւի նոյն ինքն Պատմաճեանի տեղեկութիւններէն, եղած է ժամանակի ամէնէն ազդեցիկ անձ:

(°) «Տպագրեցեալ արդեամբ՝ բարեացապարտ ծերունաւարդ Պաղատասար Ամիրայի, եւ իւր հարազատ մշտնի Գաւապար Ամիրայի՝ Մուրատեանց» ետլւն, «յամի Տն 1774», ի տպարանի Աժատուրի:



վարուեցանք զի բազում դորձողութեան մերում եւ րազմացութեան ի վեւրայ մեր զհակառակորդս (էջ 107), եւ ասուցիւ այդ բոլոր զիջողութիւններ ու համակերպութիւններ ապարդիւն կը մնան հաշտութեան համար եւ միայն նոր նոր թշնամիներ շատցնելու կը նպաստեն Պատմաճեանի դիտելի կուտայ նաեւ ինչ իրեն նման քաղաքավարող ժամանակակից կարգ մը եկեղեցականներ, զորս յակնել յանուանէ ցոյց կուտայ, ու եւ է ձեռքով աւարդուած ու հաշտուած են, կը յիշատակէ նաեւ կարգ մը այն եկեղեցականներն, դարձեալ յակնել յանդուանէ, որոնք գտած էին ամբարշտական ժամանոցները զգուհլու գաղաւթը (էջ 27-33), իսկ եւ կը հաւատամ որ իր արեւմտեան օրինակները իրողութիւններ են<sup>(\*)</sup>։

Այն անձնակցի թիւրինացութեամբ ասած մեծ մեծ համեմատութիւններուն ամենէն ուշագրաւ պատճառին՝ ֆրանկութեան խնդիրն վրայ, որ բուն նպատակաւոր նկատուեցաւ Պատմաճեանի պատրիարքական գործունէութիւնը, Կ'արժէ որ քիչ մը աւելի ռաշադրութիւն հրաւիրենք։ Այն նոյնք որ հարեանցի կը կարգանայ այս Օիշապակարմը ու ասոր նմանները, ինչպէս նաեւ Չամչեանի այս մասին գրածները իր Պատմութեան մէջ, պիտի ըսեն որ ստուղիւ ա'ջ միայն Պատմաճեան, այլ նաեւ իր նախորդները, Նալեան եւ Կոլոտ եւ ասոնց դպրոցը ամբողջ, նպատակաւոր էին ֆրանկութեան կամ կաթոլիկութեան, միմէ նոյն ինքն Պատմաճեանի վախճանը եւ ժամանակակից եկեղեցականներէն Պրաւասլի Առաջնորդ Սամուէլ Նպուր ընթացքը եւ Սառափեան Սարգիս Սպար վախճանը, որ Պատմաճեանի պէս օտար աստղերու տակ մեռաւ, ապացոյց չեն ֆրանկութեան նպատակաւոր հոսանքի մը, որ դոյռութիւն ունեցած է ազգին մէջ, թէ այս պատճառաւ կոլոտ եւ իր յաջորդները, ինչպէս նաեւ իր Դպրոցէն ունեց հաշտութեան, եւ Պատմաճեանի ալ հաշտութիւն մէջ մնաց։

Այս խնդիրը, այսինքն Հայ եւ Հաւան եկեղեցիներու յարաբերութիւնը իրողութիւն մըն է եւ պատմական հիմքաւ վրայ կրնայ չուրջ տեսնուիմարութեան մը պարակայ ըլլալ, եւ թերեւս օր մը զայն ընեալու առիթը կը գտնենք, ըսյոք իբր ակզբունք այդ եւ այդպիսի գաղաւթ նասիրութեան մը քաթիւն այժմէն կը յայտարարենք, թէ ֆրանկութեան կամ կաթոլիկութեան կամ պապականութեան խնդիրը սկիզբէն ի վեր Հայոց մէջ իբր համազումի իբր ուղղափառ գաղաւթութեան խնդիր չէ յուղուած։ Հոսմը կամ Վատիկանը, սկիզբէն ի վեր, միշտ արարպետի ուղած է արեւելեան եկեղեցիներու վրայ։ Այս Հայք մա'նաւանց Ռուս ընեանց ժամանակէն ի վեր, իրերու քերմունքով, կարօտ Վատիկանի

(\*) Գնորք Պարք, Կ'ըսէ, կայծ կը գնէր ամբարաններէ միափայտին վրայ, Զաքարիա Պարք, Կ'ըսէ, օտքի կ'էլէր կ'ըլկոտարէր եւ կը մատուցէր անոնց։

քաղաքական օգնութեան, միշտ յարգած են իրենց քաղաքական վերին իշխանութեան թելադրած պահանջները, եւ Հայ Եկեղեցին կատարեալապէս զիպուած ապաշտ վերաբերութիւն մը ցոյց տուած է այսպիսի պարագաներու մէջ, եւ ճիշտ այսպիսի նորադատութեամբ մըն է՝ որ Հայոց Կաթողիկոսներ եւ Պատրիարքներ, քաղաքագիտական արդի քաջատրուութեամբ լսիւնքի համաձայնութեան» յարարերութիւններ մշակած են Վատիկանի հետ, թույլ զբաւած եւ ընդունած են Այս է իրողութիւնը պատմութեան մէջ։

Ձոր օր, չատերէն եւ կարեւորելիւն հատ մը յիշուլու համար, նկատի առնելով Բարձրագոյն Կոստանդին Կաթողիկոսի մամանակ Հոռովի եւ Սիսի յարաբերութիւնները, այս առթիւ գումարուած եկեղեցական մողովը, ի Սիսի հոն տրուած կանոնները (կիրակոս Էջ 167-173) պապական Լեկսք Տիմանլին Կիլիկիա դալը անձամբ (1217), եւ աչս առթիւ Կոստանդին Կթղ. ի կողմէ Հեթումին ուղղուած նշանաւոր թուղթը. (Դիւֆ-Ժյոք Էջ 303 509) — թուղթ մը, որուն կարեւորութիւնն ու վաւերականութիւնը Ձամլեան ի զուր լսխատած է ու բանալ (Պտմ. Գ. Էջ 231-32) — բոլոր ասոնք պատմական ապացոյցներ են Լատին եւ Հայ Եկեղեցիներու յարաբերութեան մեր կողմէ քաջատրուած նկարագիրը ճիշտելու համար։ Այս կէտը լաւ ըմբոնելու համար պէտք է զիտիլ պարագայ մըն ալ, այսինքն՝ Հայ Եկեղեցին երբ քաղաքագիտական պատճառներէ զերծ՝ ուղղակի դէմ դիմաց գանուեցաւ Հոռովի հետ, քաջարձակապէս յայտարարեց, թէ ինքը ու եւ կերպով պէտք չունէր պապական հոգածութեան, վասն զի ոչ-յորիստոնեայ փառավարութիւններ աւելի հոգ կը տանին հայ ազգին հանգստեան եւ եկեղեցոյ պաշտպանութեան քան քրիստոնեայ կառավարութիւնները, եւ թէ պապական միաբնակարարներ ի զուր կողմէն կը մանին Հայոց մէջ եւ սուտ ու սխալ լուրերով կը պատրեն Պապը։ Հայ եկեղեցին իր յարաբերութիւնները միշտ զգուշութեամբ մշակած է Հոռովի հետ եւ իր ամէնէն խիստ դատողութիւններն ալ ըրած է համարձակ քաղաքավարութեամբ։ Այնպէս օր քաղաքավարական այս պայմաններու մէջ մշակուած յարաբերութիւններ ոչ փառնկութեան նպատակաւ հոսանք կը նշանակեն Հայոց ցով, նոյն իսկ ամէնէն աւելի կաթողիկոսէր նկատուած կաթողիկոսներու տոնն, ոչ ալ հպատակութիւն Հոռովմայ Աթոռին այս ինչ կաթողիկոսին կամ պատրիարքին կողմէ։ Այսպիսի վարկածներ պատմական խալանք են եւ ուրիշ ոչինչ եւ երբեք չեն հաշտուիր Հայ Եկեղեցւոյ օգոյն հետ։

Մեր ուսումնասիրած քառուն սկիզբը Ալեքսանդր Կաթողիկոս (1707—1715) թուղթ մը գրած է Կղեմէս ԺԱ. պապին, մեծ յարգանքով եւ կորովի համարձակութեամբ, թուղթ մը շատ նշանաւոր, որուն մէջ Հայ Եկեղեցւոյ քաւանաքանական ըմբռնումներն ու բանաձեւերը պարզ զիւլէ ետք կը բողոքէ պապական քաղաքականութեան դէմ, պապական

միտիօրներու գէտ, որոնց ձեռքով կը պատակտուի քրիստոնէական հեկեազեցիին, Հայերը, կ'ըսէ ողջամիտ Կաթողիկոսը: Այնք չունին ատենց քարոզութեան, թող ոչ-քրիստոնեայ ազգերու մէջ երթան քարոզին, առարովհետեւ ունիմք մեք հաւատ եւ մկրտութիւն, քարոզիչքն աշխարհի նախասացեալք, ոչ պարտին աշխատ լինել առ մեզ, այլ առաւել առ աշխարհի՝ որք ոչ կարգան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի» եւ ալլն (Տե'ս Փարոս, Զ. Մսերեանցի, Տետր Բ. 1873, Մոսկուա, էջ 3-31, ամբողջ ուսումնասիրութիւնը հետաքրքրական է) Այս բողոքը ամէն կերպով նշանաւոր է եւ նշանակալից:

Արդ՝ 17րդ դարուն սկիզբը Ֆրանկոսթեան իր հին ձեռնարկերով երեւումը Արարատի կամ Կ. Պոլսի մէջ տարբեր իրողութիւններու շառաջնորդեց Հայ Եկեղեցիին Կ. Պոլսի մէջ Աւետիք Պատրիարք Թովմատի խառութեամբ վարուեցաւ Ֆրանկոսթեան հետ եւ ինքը զոհ եղաւ իր խիստ քաղաքականութեան: Օսմանեան Կաթաւարութիւնը ողջմտութեամբ պաշտպանեց եւ պահեց Հայ ազգն ու եկեղեցին Հոգովմի ձգտումներուն առջեւ, որուն դժբախտաբար ոյժ կուտար Փռանալի դիւպանը: Աւետիքի յաջորդները հետզհետէ աւելի խոհեմ քաղաքականութեան մը ուղեցին հետեւիլ, որպէս զի բախում չունենան մեծ եւ վտանգաւոր ոյժերու եւ Կոլոտ Յովհաննէս Պատրիարքն էր՝ որ ձեւ ու կերպարանք տուաւ այդ խոհեմ քաղաքականութեան եւ սակայն ոչ ատենց դժուարութեան Կոլոտ ոչ միայն ուղեց հաշտ երթալ Հոգովմի հետ, որուն իրաւաներու շահերը, ինչպէս ըսինք, Փռանալի Կաթաւարութիւնը կը պաշտպանէր Կ. Պոլսի մէջ եւ Պապական Նոյիրալիներ անձամբ կը հրուկէին գործին, այլ նաեւ նոր քայլ մըն ար առաւ, այսինքն որոշեց Եղզի Գրանկոսթեան զէնքով կոռել Ֆրանկոսթեան հետ Ասոր համար զպրոց հաստատեց, բառիներէն եւ խաւերէն լեզուները ներմուծեց հոն, դարուն ամէնէն նշանաւոր կրօնական հեղինակները հայերէնի վերածել տուաւ, եւ խնամոտ ընտրանքով մը առաւ Կոլոտն մէջէն ինչ որ համաձայն էր Հայ Եկեղեցւոյն, եւ ըրաւ կարելին, որպէս զի կրօնական պատակտում տեղի չունենայ Աղգին մէջ Կոլոտ եւ ետքը Նալեան քիչ շնորհակցան այս խոհեմ քաղաքականութեան համար նոյն իսկ իրենց աղգին կողմէն: Անհրաժեշտ մարդիկ, բարեմիտ պահպանողականներ, ազէտ մոլեռանդներ ամէն տեղ եւ ամէն ատեն կը գտնուին եւ դժբախտաբար շատ կը գտնուին Պաքմահեան, զուրկ Կոլոտի կորովէն եւ Նալեանի հեղինակութենէն, ուղեց հետեւիլ անոնց քաղաքականութեան, բայց իր դէմը գտաւ Գասպար Ամիրայի պէս ճարտարախօս, ազգեցիկ եւ միանգամայն ռիսկալ Ամիրայ մը: Հսինք արդէն անգամ մը, թէ Պաքմահեան, որ բարեկամ միայն ունէր իրեն դէմ լարուած Քաղաքային Խորհուրդին հետ, չկրցաւ աղգել իր հակառակորդին վրայ եւ հասկըցնել ինքզինքը: Աւելի շատ խորհեցաւ իր հպիսկոպոսութեան վրայ քան իր

քաղաքականութեան վրայ, կարծելով թէ իբր նպիսկոպոս-Պատրիարք ինքնին ազդեցիկ պիտի ըլլար. մինչ իրապէս կը սխալէր, որովհետեւ այդ փամփոխներու Պատրիարքութեան ոյժն ու ազդեցութիւնը կը կապուէին կորովի խորամանկ, խիզախ բարձր եւ քսակ քսակ ոսկիներու բարդը: Պատմական զուրկ էր ասոնցմէ, եւ ինչպէս կ'երեւար չունէր նաեւ կոլոսի ճարտարախօսութիւնը եւ Նախնի հրապուրիչ լեզուն (էջ 33), որ կարող ըլլար պահել իր դիրքը եւ գրաւել ժողովուրդը, եւ հետեւաբար չատ գիրութեամբ նշաւակ եղաւ ամբարշտական անողոք ատելութեան: Ամբարշտութիւնը, որ ընդհանրապէս իր ներքին կեանքին զեղծումները, իր բարոյական ապականութիւնները կը ծածկէր արտաքինայարդար եկեղեցասիրութեամբ, ցերմ աւանդապահութեամբ եւ կրօնական նախանձայուջութեամբ, եւ այսպէս բարդ յամկութիւնը կը մաշնիսէր ու իրեն կը կապէր — Պատմականի կրօնատար յիշատակաբաններուն այդ հաւաքածոյին գրեթէ ամէն էջին վրայ ուշիմ եւ չննսկատ ընթերցողը կը տեսնէ այս ճշմարտութիւնը եւ կը թափանցէ իրօքութիւններուն խորը:

Պատմական ասուգիւ սկիզբէն ըսաւ թէ չկրնար մեծ ազդերու հետ շփուիլ ու կոտիլ կաթոլիկութեան համար, եւ այս պատճառով ուղեց իր նախորդներուն խաղաղ քաղաքականութեան հետեւի եւ նոյն իսկ յուզուած կրօնական կամ դաւանաբանական խնդիրներուն մէջ շատ մեծ խտրութիւն չտեսնել, ոչ թէ մասնաւոր դիտումով մը, այլ անոր համար որ պէտք եղած հետեւութիւնը չունէր: — Ինչպէս կ'իյնի իր այս պատասխաններէն, զորս տուած է փոփականապի Ալթմանախիան եպս. ի միջնորդութեամբ ուղղուած հարցումներուն (Ճե'ս Յաւելուածը), — եւ վտանգել իր անձնական եւ պաշտօնական դիրքը այն պահճան, որ չկրնար Պոլիս մնալ, իր ծննդավայրը, եւ հակառակ դոնէ Նրուսազէմ երթալու իր բուն տենչին, կ'ըստպալուի հետեւեւ թուրքային եւ երթալ իտալիա որ ուսանողական կեդրոն մը նկատուած էր: Վասն զի Հայք իտալական լեզուի շնորհիւ զբաղան եւ ուսումնական զարգացման մը լոյսը կ'առնէին Ներոպային:

Աւ կ'արժէ որ ֆոնսկութեան կամ կաթոլիկութեան խնդրը այս կողմէն ալ նկատի առնենք: Հայ ազգը դիտութեան, լուսաւորութեան, յառաջդիմութեան ծարաւ տարր մըն է, եւ ամէն առիթէ օգուտ կը քաղէ այդ բարիքները վայելելու համար: Եթէ Ունիթոսներ պահ մը յաջողեցան Հայոց մէջ, իրենց բովանդակ յաջողութեան բովանդակ գաղաւթիքը կը կայանար իրենց լեզուին մէջ եւ այդ լեզուաւ արուած հետեւութեան մէջ, եւ ոչ թէ հռովմէական դաւանութեան ուղղափառութեան մէջ: Մտաւոր աշխարհի համար նոր լոյս, նոր ծանօթութիւն, նոր հորիզոն՝ միշտ հրապուրիչ է: Հայերէն շատեր հրապուրուեցան այդ լոյսէն, բայց ոմանք, տկար եւ անընթերց, ոմանք ալ, փոստասէր եւ գիււ

րաւաւան, չլմտրեցան բոլորովին եւ ինկան պապականութեան գիրկը, քայքայեալ չեղաւ Կոնստի ժամանակ. այս միջոցին Հայոց մէջ միտքերը զբաղեցնող շարժումը զարգացման, լուսաւորութեան շարժումն էր, այո՛, չնչիւ ուրանալու որ ժայ միջոցին ալ տկար, փառասէր, գիւրաւաւան Հայեր չգտնուեցան, բայց ասոնք Կոյսաներ չէին, Նալեաններ չէին, Պատմահետաքննիչներ չէին, չէին Դաւիթ Ստեփանեաններ եւ ասոնք նմանները, մի՞ գարմանաք, օրերէն ընթացողներ, երբ ըսեմ, թէ մոյն իսկ Մխիթարեան չէին, Կոնստի, եւ պատմական աններելի խեղաթիւրում մըն է հռոմէական ուղղափառութեան պիտակներ փակցնել այսպիսի հակառակներու վրայ, Լուսինի պայքար հայ եկեղեցականներ զարգացման համար միայն գալած են, եւ ասոր փառաւոր օրինակը տուաւ Սեբաստացի Մըսիսթար Վարդապետ. սա ի սուր աշխատեցաւ Թուրքիոյ մէջ խաղաղ եւ մտաւոր զարգացման շարմար վանք մը գտնել, ուր կ'ուզէր հաստատուիլ, սիրելի, սորվեցնել, ուսնել եկեղեցականներ հասցնել, լուսաւորել ազգը դարձնել կրթութեամբ եւ Հայ Եկեղեցին այսպէս պաշտպանել այս կամ այն յարաւերաւորութեան յոխորտանքին գէշ Մխիթար Վարդապետ շատ անգիր գնաց, Հայոց գրեթէ բոլոր յարմարագոյն վանքերը տեսաւ, բայց վերջապէս իր փնտած գետնը Լուսինի մէջ գտաւ Մխիթար Վրդ. ի գործը շատ շուտ փայլեցաւ, որուն արդիւնքն ու համար տարածուեցաւ Պոսթ մէջ. ամէն եկեղեցական, առանց նկատի առնելու տարիքն ու աստիճանը, բաւական էր որ փալաք ունենար, նոր նոր բաներ սորվելու, պիտի ուզէր Մխիթարին հետեւիլ, ասոր պէս գործել, Պատմիկութեան անկախ, բայց նոյն իսկ կաթողիկոսութեան գէշ զուտ ուսումնական ձեռնարկ մըն էր այս, եւ յայտնի է որ նոյն ինքն Սեբաստացի Մխիթար Վրդ. հայադասան միաց, եւ պապական պաշտպանութեան այն աստիճանի վրայ, երբ թշնամիներ ունեցաւ եւ տնոնք ամբաստանեցին զինքը եւ մարդը տարաւ հողի վրայ իր օրական ձեռնարկը փրկելու համար ու եւ է ձախողութեամբ, օտարութեամբ իր անձն ու գործը պաշտպանել վատիկանի առջեւ եւ անոր հաճելի եղանակով — եւ այսպէս եղաւ Մխիթար Սեբաստիոնի Մխիթար եւ Մխիթարեանք երկուք անոնք պահեցին կամ պահել չազնոյն իրենց միտքերն ու Հայ Եկեղեցւոյ հետ, ասոր իբր պայքարը կարելի է մասնաւոր ընել սա իրողութիւնը որ Մխիթարեանք իրենց հրատարակութեանց ճակատին վրայ երբեմն պահեցին « ի Հայրապետութեան Տեսան... » Հայոց կաթողիկոսի, քորոյմը, որ զուտ հայեանի բան մը ունի « Մխիթարեանց համաձայնութիւնը Հռոմի Նկեղեցւոյն հետ ուղղակի Մխիթարեան չէր, ժամանակի եւ պարագաներու ինքնուրոյն արդիւնքն էր այդ, որուն հաւանութիւնը մերթ ընդ մերթ կ'ըզգան արդի. Մխիթարեանք եւ կը ջանան եւս մը պահել:

Գալով Պատմահետաքննիչ, անոնք որ նա կ'ամբաստանուէր նաեւ



իրք թէ Սարգիս եւ Սամուէլ եպիսկոպոսներուն 800 քրակ փող տուած  
 եւ Խաչիւրա զըկած ըլլայ՝ Դպրոց բանալու եւ գիւքեր հրատարակելու  
 համար հաւանաբար իրաւ էր այս ամբաստանութիւնը, բայց ոչ թէ  
 Հայերը լատինացիներու, այլ ինչպէս որ զիտեւ տուինք, Մխիթար  
 Վարդ. ի պէս ուսումնական ձեռնարկներ ընելու կողմէն Վասն գիւստոյ  
 է որ Սարգիս եւ Սամուէլ եպիսկոպոսներ զացին Խաչիւրա — եւ թերւոյ  
 Սամուէլ այս նպատակի համար մերժեց Կ. Պոլսի Պատրիարքութիւնն  
 ալ — եւ Սարգիս եպս 10 տարի մնաց հոն, սպարոն հաստատեց (1752),  
 բայց տարի մը ետքը փակեց, որովհետեւ իր գիրքերուն գրամուտը իւ-  
 րացուցին ուրիշներ, եւ ինքը ստիպուեցաւ Թուրքիա վերադառնալ՝  
 տպարանը ուղղակի Կ. Պոլսի մէջ հաստատելու, զիտուով, Բայց ինչո՞ւ  
 եպիսկոպոսը չհասաւ իր փափաքին, երկար ճամբորդութենէ մը ետքը  
 իզմիրէն ետ դարձաւ եւ մեռաւ Լիդոսնայի մէջ (1773 Հոկտմ. 1), իբր  
 թէ թուրքովին լատինացած — — իր լատինամիտ կենսագիր Նուրոհն-  
 եանի պատմութիւն համեմատ Սամուէլ եպս. կրցաւ վերադառնալ Կ. Պո-  
 լիս, ուր մեռաւ եւ թաղուեցաւ Մասգիւզի գերեզմանատունը (1786),  
 Պատմաճեանն ալ չէր ուզէր մնալ Խաչիւրա, ինչպէս որ Կ'երի ի իր Յի-  
 շուսիկարանէն, հակառակ իւր վայելած ասպնջակաւիտութեան փութակաւ-  
 տայի կողմէն եւ անպատուօրէ վիճակի մէջ կը վախճանի՝ հաւանաբար  
 Լիւքսնայի մէջ, հաւանաբար կ'ըսենք, որոհետեւ իր վախճանին վրա  
 տեղեկութիւն չունինք, նոյն իսկ իր տապանագիրն ալ առ ձեռն ունե-  
 նալով (Տե՛ս Յաւելուածը):

Կոյտի Դպրոցին վրայ զիտուած լայնախոհութեան փթթումը եւ  
 ուսումնական շարժումը, ըստ մեզ կարելի չէ կաթոլիկութեան նպաս-  
 տաւոր երեւոյթ մը նկատել — — նոյն իսկ Սատաֆեանի եւ Պատմա-  
 եանի պէս եկեղեցականներուն Փոփականաւայի համոտն ունեցած յա-  
 րաբերութիւնները տեսնելով, ւ Սրբալիբ համաձայնութեան ո քաղա-  
 քականութիւն մը քիչ մը աւելի անխորակաւորութեամբ մշակուած քա-  
 յի մը անհաստեղծ կողմէ. քաղաքականութիւն մը, ուր ոչ մէկ կողմ  
 կ'ուզէ բան մը տուժել, բայց եթէ իրենց շահը զիտել եւ անոր համար  
 աշխատել:

Եւ ուրիշ կերպ չէին կրնար ընել, եթէ պապութիւնը երբեմն  
 Հիւրիպրանսներ ունեցաւ, իբր գերազանց արտայայտութիւնը պապա-  
 կան իշխանութեան ձգտումներուն, որոնք Հին Իկոսները սպասել տուին  
 իրենց գոներուն առջեւ ցուրտ օդին, եթէ անոնք բանակներ կրցան  
 հանել տալ իրենց քաղաքականութիւնը յատկացընելու եւ ծաւալելու  
 համար, եթէ նոյն իսկ մեր ուսումնասիրած դարուն մէջ Յուանսա, իբր  
 ամէնէն հաստատրիմ գուսարը Հոովմի Սկեզեցեոյն, Զերմապէս եւ արա-  
 տաւոր միջոցներով կ'աշխատէր իր մօր փափաքներն ու քահանայքեա-  
 րը գոհացնելու, Հայ Սկեզեցիին, որ իր հին եւ պատմական արապին ամէն

առաւելութիւններէն զրկուած, միս՝ միւսակ զէմը՝ կը՝ դանձաւք Հոռովմի-  
Ֆանաւայի միացեալ ոյժերուն, Հոռովմ՝ վաղեմի ախոյեանը Հայ Ազգայն-  
ւոյն, ինքզինքը պաշտպանելու համար երկու միջոց ունէր, Առաջինը՝  
Օսմանեան Պետութիւնը, որուն հաւատարիմ եղաւ միշտ եւ պաշտպա-  
նուեցաւ անկէ, Երկրորդը՝ իր խոհեմ քաղաքականութիւնը, որ յառ-  
օգտակար եղաւ Կոլոտի եւ Նալեանի ծառնու Պատմաճեան՝ մարդը չէր  
այդ քաղաքականութեան եւ ասոր համար ինկաւ, տասը տարի խառա-  
պելէ ետքը պատրիարքական աթոռին վրայ:

Եթէ Կոլոտ-Նալեանի քաղաքականութիւնը շարունակուէր իր բարձր  
եւ շինիչ նկարագրով, հայ-կաթոլիկ հատուածը դոյտ թիւն պիտի չուներ  
ազգին մէջ. ոչ Պատմաճեան կրցած էր հասկընալ այդ քաղաքականութիւնը,  
որ բոլորովին ակարութիւն մը եղաւ, ոչ ալ իր յաջորդը Զաքարիա Պարք-  
կրցաւ իր հալածիչ քաղաքականութեամբ հատուածին անաջօրը առնել:

Մենք կը կարծենք որ հայ-կաթոլիկներուն ծագման պատճառ թեան  
մէջ թաքուն իրողութիւններ կան զիստ Անտանիան Միաբանութեան  
Մատենադարանին մէջ կը պահուին Սեդրոսեան Յոհաննէսի կարգ մը  
նամակները, որոնք ուշագրաւ տեղեկութիւններ ու յայտնութիւններ կը  
պարունակեն կաթոլիկութեան խնդրին նկատմամբ, Ո՛վ զիտէ գեռ այս-  
պիսի ո՛րչափ նամակներ կան աստ ու անոյ, որոնք բուն իրողութիւն-  
ները պիտի կրնան լուսաբանել, Ես այդ նամակներէն մի քանիսն՝ պա-  
տահարար աչքէ ծնցընելով՝ հիտեցի որ Սեդրոսեան համամիտ չէ Գարգի-  
նայի մը ձեռք առած միջոցներուն, միջոցներ, որոնք Զաքարիա Պարք-ը  
ստիպեցին խուսն քաղաքականութեան մը հետեւ իլ:

Պատմաճեան զոհն է իր իսկ վարչական սկարութեան, զոր չկըր-  
ցաւ մոռնալ պանդխտութեան մէջ եւ ուղեց արգարացընել ինքզինքը եւ  
իր գրուածներով ու յիշատակարաններով պահել իր շարչարուած կեան-  
քին պատմութիւնը, ուր՝ սոսկալի եւ պօզալի Է տեսնել ամբարստան  
ամիրայութեան մը շահատակութիւնները, որոնց մէջ կը բզբտուի թոյլ  
եւ դիւրահաւան պատրիարքի մը արժանապատուութիւնը:

Իտալական Զուրիբու՝ եղբրքը գրուած այս Միշտակարաններուն  
ձալքերուն եւ ալքերուն մէջ զղջումներու եւ կարօտներու խորունկ հո-  
սանք մը կը գալարուի (էջ 93-94), Պատմաճեան մեռաւ Իտալիոյ երկն-  
քի տակ, զուրկ հայրենի երկրի եւ երկնքի առաւելութիւններէն, ծնողա-  
կան յարկի դուռնքներէն, Փրօփականտայի կողմէ ճշտուած չափուած  
ռոճիկներու դառնութեան մէջ, անգամայնջ եւ գրեթէ ութուել Ժարի-  
ններու բռնկումով ճնշուած թայց մեռաւ կարօտով իր Երկրին, կամքով  
իր Եկեղեցւոյն, կարօտով մա՛նաւանդ Գլխադիր Ա. Յակոբին, իր առ կա-  
րօտը այնքան հոգեկան էր եւ այնքան իրակամ, որ ամբարստանի Գնկթով մը  
կ'ըսէր, երանի՜ թէ ոչ իսկով պատրիարք ըլլաքի՜ք (էջ 117) եւ չքաշէինք  
այս տառապանքները եւ պանդխտութեան այս դառնութիւնները:

## ԲԱՆԱՍԷՐ

ԿԸ ԴԱՌՆԱՅ ԿՐԿԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻ ԱՆՈՐ ԿԱՇԽԱՏԱԿՑՈՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԷ ԵՐԵՒ ԱՄԻՍՏԵՐԱՆԻ ԱՆԳԱՍ

ԽՆԴՐԵՆԻ ՏՐԱԾԵԼ «ԲԱՆԱՍԷՐ»Ը

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՊԱՍՍԱՃԵԱՆ ԳՐԵԳՈՐ ՊԱՏԻՍԿԵՐ

Ուրեմն եղիկիք նոքա , որք չաղակրատեն եւ բարբառնին եւ աշ-  
նու սպանանին զանպարտան , որք եւ ընդունին զգառաստանս եւ զվրժ-  
խնդրութիւնս ի յարգար դատաւորէն Աստուծոյ . ուստի տաց Տէրն .  
« որ սպանանիցէ , պարտաւոր լիցի դատաստանին » : Ուրեմն , ողորմելիք  
են նոքա , որք զրպարտութեւ եւ զրախօսութեւ եւ չարաչար բամբասանօք  
դատին եւ դատապարտս առնեն զընկերս իւրեանց ուստի ի դատաստա-  
նին Բրիտտոսի , ինքն արգար դատաւորն պարտաւոր է զայնպիսիս ըստ  
բանի իւրում , որ ո՛չ անցանէ . վասն որոյ ողորմելիք եւ եղիկիք են  
նոքա , որք պարծինն ի վերայ խորհրդոց իւրեանց եւ ասեն , խորհուրդք  
մեր են արգար եւ անաչառ . սակայն զի՞նչ ասէ Տէրն . եթէ ոչ առաւ-  
ելացաւ արդարութիւն ձեր յաւելի քան զզպրաց եւ փարիսեցոց : Ո-  
ղորմելիք են նոքա , որք ունին զքինախնդրութիւնս ի սիրաս եւ ի խոր-  
հուրդս . զոր օրինակ նա , որ ոչ եթող զպարտս ծառայակցին իւրում : Վա-

որն որոյ մասնեցաւ ի ձեռս դահճի, մինչեւ հաստուցանել նմա դամենայն  
պարտս իւր :

Եղկելի խոտաւիրաքն, որք ասնին զանողորմութիւնս եւ խոտա-  
ցոնցանին զսիրտս իւրեանց ի վերայ խեղճարկայն եւ կարօտելոց, առ-  
նելոց եւ ըստ խոտաւորութեանց զխոտաբէնն, ուստի ասէ Տէրն : « Երով  
չափով չափէք. նովմբ չափեսցի » : որ զայս իմէ լաւրիք իցին, ըստ բա-  
րութեանց եւ եթէ չարք եւ չաղիրաւք, ընկալնու ըստ իւրեանց ա-  
պիրատութեանց : զի զոր ինչ սերմանէ, որ, զնոյնն եւ հնձեսցէ. վասն ո-  
րոյ պարտի ջանալ ժամենայն ոք զի զգուշացի ի յամենայն բանս. զի  
մի՛ դոնցէ հասանիցի ի վերայ իւր զսուր ամային բարկութեան եւ ըս-  
պառնալիքն հորա. ուստի անա րերտնով մարդաբէն միշտ զեկուցանէ  
եւ խրատէ որպէս որ ասէ. « անա հատու զբանս իմ ի բերան քոյ. լուի-  
ցես բանից իմոց եւ րերտնոյ իմոյ եւ զգուշացուցես զնոսա ի բրեւ յի-  
նէն եւ ասիցես. « րերան Տեառն է, որ խօսեցաւ » » : ուստի անա յայտէ,  
որ ի րերտնոյն Աստուծոյ է. որ ցոլանայ եւ խլանէ, հասանի եւ ժամա-  
նէ անա ի հասանի եւ որոշել զսիրտս եւ զնոյն որ զայտոցիկ միշտ բե-  
րանով եւ բանիւ վերակացուաց եւ անաջնորդաց ժողովրդեան առ հա-  
ռարակ որք խօսէին, ուստի այժմու ամենայն զէտք եւ անաջնորդք,  
զոր խօսեն զբանս եւ զպատգամս՝ Աստուծոյ է, զոր ի բրեւ ի րերտնոյ  
նորա է, որք խօսեն ի դուրս ժողովրդեան, որպէս ասի ի յայլ ուրեք.  
« Որդի մարդոյ զէտ կայոցի զքեզ ի վերայ ժողովրդեանդ » : ուստի եթէ  
բանս յորդորականս եթէ խրատականս եւ եթէ յանդիմանականս զորս  
խօսեն եւ ասեն, ի րերտնոյ Աստուծոյ խօսեն եւ ասեն. որպէս որ զէտ  
եւ անաջնորդ ազգին այսինքն՝ Յակոբայ պատրիարքին եւ արքեպիս-  
կոպոսին զսր ասաց եւ խօսեցաւ եւ գրեաց իսկ իւրոյ ձեռամբ զայս  
բանս ասելով. ( Աստուած՝ զմիաբանեալդ ի բարին՝ ծովանման օրհնու-  
թեամբ օրհնեսցէ եւ որք հաստն այժմս եւ առ յապայ ընդ կորխայն  
ընդ Ահառայ նորանշան պատժօք տուիեսցի. զրեցաւ զոգոջ ձեռամբ )  
ի վերայ այժմ բնիս ներկայ գտանեցեալ անձինք բոլորքն ի մէջ յայ-  
նըմ հանդիս ի եւ խորհրդոց որք էին կախկողմունք, վարդապետք, քա-  
հանայք, յառաջակէք ի խանք եւ գլխաւոր ամիրայք եւ ի խանք եւ առ  
հասարակ ժողովուրդք եւ բոլոր արհեստաւորաց ծիրունիք եւ գլխաւորք,  
բոլորքն զրեթէ աղովին հանդերձ հաճեցան առ յայն բանս ծերունի  
Պատարարքին իւրեանց եւ յանձնատուք եղեն պրուածոյն նորին եւ հաճ-  
եալք ընդունեցին զբանս եւ զաստութիւն նմին, որք եղին ի րերտնոյն  
յայնմիկ ծերունւոյն, այսինքն՝ Մեծի Պատրիարքին, արքեպիսկոպոսին  
իւրեանց, ըստ որում որ կնքեաց եւ գրեաց եւ հաստատեաց այնու զբանս  
իւր :

Աստանօր ո՛ր ընթերցողք, ահա ասիկ պետէք մտաց աչօք ձերովք  
եւ իմացէք զինոքս որք կացին եւ մնացին ի վերայ յայնմ ու խոսին



եւ պայմանին հաստատու, վայելեցին զօրհնո թիւնս եւ մնացին ի խաղաղութեան եւ ազատս ի պարտականութենէ . սակայն ոմանք ի նոցանէ օցտեալք ի յայս խորհրդոց եւ մեկնեալք ի միաբանութենէ , ելանելով ի կորստական բաղանիս իւրեանց , ջրեցին զբանս եւ զուխտս եւ առնելով զապախտս , լինելով ուխտադրուծս եւ յոչինչս համարելով ռահաճարս աւարին զբանս նոյնոյ հայրապետի եւ ձերոււոյ որք եւ ասին եւ վայելեցին եւ ընկալան զփոխարէնս . զի ըստ բանի Նորին , որք պատժեցան նորան , առ պատժօք եւ որպէս թէ իբրեւ զհանդերձս զգեցան զգետնս անխիղճ եւ առին զթշակ եւ զփոխարէնս հանդերձ ըլլորիւքն եւ խորհրդապետին , որք անակնկալելի դիպուածովք իբրեւ զթղեներն այն աւանիծան եւ ցամաքեցան եւ կամ որպէս զղղմներն Յովնանու խորշակահարս եղեալք յոչնչացան : Զի ի նոցանէ ոմանք խելաթափս եղեալք՝ այնպէս փչեցին զհոգիս իւրեանց . ոմանք ատամամբք իւրեանց զմարմնս խածատեցին . ոմանք իբրեւ զանասուն գողալով եւ փոնչելով անկան ի կենաց . ոմանք սրով խողխողեալք իբրեւ զպատժապարտս եւ ոմանք ի լուսոյ աչաց զրկեցեալք խաւարեցան . եւ բազումս ի նոցանէ բազում տառապանօք եւ նորանշան պէսպէս պատժօք եւ զիպուածովք պատժեցեալք . նոքա՝ որք իրազեկք գտանեցան յայսմ բանից եւ խորհրդոց , որք էին խորհրդակիցք ընդ խորհրդապետին իւրեանց . ուստի կացին եւ մնացին ի ներքոյ ծանրագունի կապանաց եւ անխիղճ ի յայնմ անշնորհութեանց . վասն որոյ գրեթէ ի ժամանակի յայնմիկ էին որպէս թէ վասակունք ի մէջ ազգին . որք եղեն ուխտադրուծք եւ տիրապետեցք , վասն որոյ տեսնին իսկոյն զինքնեանս ի մէջ զառն եւ աղետալի վիճակի վիճակեցեալք , որք վարանեալք ըստ ամենայնի եւ չարաչար տանջեալք եւ չարարեալք . եւ իբրեւ զընոցի ջեռաւ փոր նոցա , որ եւ խլացան լսելիքն , ծակոտեցան մարմնք եւ չրթունք եւ լուծան ջիւք բազկաց նոցա եւ ի յետ կոյս կորացան կրունկք նոցա , ճաշակեցին զմահ եւ արբին զջուր զառնութեան եւ անխիղճ , հեղձամահս եղեալ , եւ իջին անհնարին եւ անտանելի դառնութիւն ի գուր գերեզմանի , եւ սոքա ա՛յնքանս եղեն , որք կամէին իբրեւ զարքայ եւ թագաւոր ի վերայ ազգին իւրեանց . սակայն ո՛չ գաւա նոցա ամենեւին գործք , զի լինիցէին արժանի յիշատակի . եւ ո՛չ յիշել եւս զբարի ինչ ի մէջ գործոցն եւ ո՛չ բանս ինչ թողին , որք ոչն գործեցին ի յաւուրս եւ ի մէջ կենաց իւրեանց . վասնորոյ իսկոյն իջին որպէս կապարս ի ջուրս օտարիկս , որպէս թէ յայնմ խտաարտի Փարաւօնի վասն հակառակութեան Մովսիսի , վասն որոյ նորանշան պատժօք պատժեցեալք ըստ բանի յայնմ , զոր խօսեցաւ Մերուսինն այն , զի ըստ որում եղին ուխտադանք եւ ուխտադրուծս , որք ցրեցին զուխտս եւ ատեցին զբանս նորին եւ արհամարեալ մերժեցին :

Երբեմն իսրայելացիք անգոսնեցին եւ անարգեցին զբանս անայինս եւ խաղս առնէին զմարդարէս եւ զբանս նոցին , մինչեւ եղեւ բարկու-

թիւն ամային ի վերայ նոցա, որ այնուհետեւ ոչ եղեւ նոցա բնչու .  
 թիւն , որպէս գրի ի բանս . զի որ խառացուցանէ զուսկն իւր առ ի ոչ  
 լսել բանից ամայնոց, պղծէ զուխտս իւր ըստ ասից . զի այնոքիկ , որ  
 խլացուցանիցեն զլսելիս վասն ոչ լսելոյ զձայնս թովչի ճարարի եւ մի-  
 առցէ զգիզս ի զեղատուէ իմաստնոյ, այլ ըստ ինքնահաւանութեամբն  
 եւ ըստ կամաց հաճոյիցն , ահա ասէ բերանով իւրոյ . վասն այնպիս-  
 եացն ժողովուրդք անհաւանք եւ որդիք ստութեանց , որք ոչն կամե-  
 ցան լսել զբանս Աստուծոյ, որք եւ ասէին թէ Վի՛ պատմէք մեզ, զի մեք  
 թողաք եւ մոռացաք զբանս » . բայց առ յայս թէ զի՞նչ բանս լուանա հա-  
 այս է, որ ասէ . «մատնեցից զձեզ ի սուր եւ ամենեքեան զուրկոտորիչիք .  
 զի կոչեցի զձեզ եւ ո՛չ լուայք, խօսեցայ եւ ստուգանեցիք եւ արարիք  
 չար առաջի իմ եւ զոր ոչն կամէի, զա՛յն արարիք . վասն այսորիկ ահա-  
 տալի, որք ծառայենն ինձ, ուրախ լիցին նոքա եւ դուք ամաջեացիք եւ  
 աղաղակեսցիք առցաւս սրտից ձերոց եւ առ բեկման ողբաց ձերոց ող-  
 բասցիք եւ զձեզ Տէր սատակեսցէ . վասն զի թողուք զուխտս ձեր եւ  
 զիրաւունս իմ ոչ պահեցիք եւ զոր անձինք ձեր ակորթեցին . ես առից ի  
 ձեռն զխաբէութիւնս նոցա եւ ըստ մեղաց նոցա հատուցից նոցա . փո-  
 խանակ զի ոչ լուան ինձ . զոր խօսեցայ եւ ոչ անսացին եւ արարին  
 զայն, զոր ոչն կամէի, այլ ատեցին զուխտս Տեառն իւրեանց եւ ասացին  
 թէ ոչինչ է եւ ոչ եկեսցէ չարիք ի վերայ մեր . զի ո՛չ սուր եւ ո՛չ  
 սով, զթոր ոչ երբեք անտանելոց եմք » . Եւ Նրեմիա ասէ . որք յուսացեալք  
 ի յայն ունայն յոտոյ եւ ի մեծութիւնս իւրեանց՝ հասանէ առ յին-  
 քեանս զսուր բարկութեան Աստուծոյ առ ի դատապարտել , որք ոչ  
 հաւատացին ճմարտութեան , այլ հաճեցան ի յանօրէնութիւնս իւր-  
 եանց . վասն այսորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազգեցութիւն մոլո-  
 րութեան ըստ բանի Պօղոսի , որ ասէ . «Փոխանակ զի զսէրն ճմար-  
 տութեան ո՛չ ընկալան, զի ապրեացին» . վասն զի երկասարի սուր է,  
 որ ելանելոց եւ ցոլանելոց է ի բերանոյն Քի , որ հատանէ եւ բաժանէ  
 մինչեւ ցորոչումն հոգեոյ եւ մարմնոյ . Ուստի ով ոք իցէ, որ ոչ ոար-  
 սիցի եւ սարսափիցի ի յայն անեղ փայլատակմանէ . ո՛վ ոք իցէ  
 քաջաւորտ , որ ի յափին մրկաց անկասկածս մնայցէ . ո՛վ ոք է ,  
 որ ոչ սարսիցի եւ ո՛չ ի յերկիր կործանեսցի յորժամ լուիցէ անեղ  
 բանս ամայինս . զի ըստ որում հրայրեաց բանք թափին ի  
 բերանոյ արդար դատաւորին . յորժամ մինչ զերեսս իւր խոժոռեսցէ եւ  
 ամենայն բանք նորա փայլատակմունք , բարրառք նորա սրածայնք  
 սպառնալիք . ուստի երկիր եւ երկինք անցանէ եւ բանք Քրիստոսի  
 մնան յաւիտեան զի նոքա որք ապախտս առնէին եղծանելով եւ ու-  
 նայնս համարելով խոտեն եւ ոտնակոխս առնեն , արդեօք զի՞նչ կար-  
 ծեն եւ զի՞նչ կամին համարել զինքեանս, եթէ ի թուոց ընտրելեաց  
 կարծեն , անյայտ է զզործ նոցին թէ զի՞նչ անպատեհս գործեցին , զոր



չէր արժանի եւ ոչ վաշխէր. որ տանհալարս արարին զուխտս եւ խռտմունս, զոր խոստացան ուրաստա լինելով ստեղծին զբանս իւրեանց. իսկ իթէ ընդ կոչեցեալս ակն ունել եւ լինել արժանի թողու թեան, ահա ասէ. «ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի». արդեօք քանի՞ ժաշհոտ ոլտուղս գայ յառաջ ի նոյնոյ ծառէ. միթէ անբարտաւանութիւն արուսեկին իցէ եւ կամ թէ զնախանձն կայենի իցէ. որ զայսպիսի պտուղս ունելովն նոցա, հատանելոց եւ ի հուր արկանելոցք. առ այս եթէ ասիցի. լուեալ եմք զայդպիսի բանս թէպէտ, սակա՞նք ո՛չ հաւատամք իթէ իցեն բանք Քրիստոսի. Սակայն դուք լուարուք ո՛վ անձինք խղճալիք, եթէ զի՛նչ ասէ Տէրն, «որ ոչ հաւատասցէ արդէն իսկ դատապարտեալ է»։ մոլոր վուրդք, որք էին առ ջրհեղեղին, ո՛չ հաւատացին նոյն, մինչեւ որ կորեան ընդ ջրհեղեղաւն. Սողոմ եւ Գոմոր անհաւանք կային մինչեւ ի սատակումս իւրեանց, եւ զի՞նչ աւելի է առ Բանն Քրիստոսի որ ասէ. «որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին». եւ զի՞նչ ասելի եւս յայն բան, որ ասի թէ. ո՛վ դուք անմիտք ընչասէրք, «զի ահա յայսմ պիշերի գնողիդ ի վնն ի բաց պահանջիցի». զի՞նչ ասելի է, ո՛վ հեշտասէրք, զի ահա կարէք հարցանել առ Սողոմոն. զի՞նչ ասելի է, ո՛վ փառամոլք, որ մոլեալքդ էք ի մեծութիւնս ձեր եւ ընդ այնու պարծիք, ուստի տեսէք թէ զի՛նչ ասի ի Սուրբ Գիրս թէ «մի՛ խորհրդական ի խորհուրդս, մի՛ իմաստուն յիմաստութեան, մի՛ հօգըն ի զօրութեան եւ մի՛ մեծատուն ի մեծութեան». ուստի նոքա յուսացեալք ի մեծութիւնս եւ պարծելով ի զօրութիւնս եւ ի յիմաստութիւնս, որք եւ այնու գործոց եւ այրեաց զինչսն կողոպտելով չեղջատեալս զիպին իբրեւ զաստիճանս եւ ընդ այնու ելանել ի բարձրութիւն վատաց, ուստի աստանօր լուծցէ զտարակոյս ձեր արուսեակն ի յանդիպոց եւ զեանաքարչ արջառնկաբու գողոհոսոր մեծածայնս փռնչելով դռնացէ թէ «որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեցի». եւ թէ զի՞նչ հեռ գայցէ, ահա յայտ է հետեւութիւն. թէ որդիք աշխարհիս, որք են աշխարհասէրք, անվրէպ եւ առանց կարծեաց ելանել ի խաւարն արտաքին. վասն զի բան դնէ որ ոչ անցանէ. որ զայս քան զամենայն բանն ահաւորագոյն է, զոր ասացաւն։

Ուստի թէ ո՛րպէս լինելոց է օրն այն, զի ահա Հերովդէս անխապտեալ երկեաւ ի Քրիստոսէ, որ մինչ դեռ էր ի յօրօրոցի, եւ ա՛յնքան մինչեւ որ խռովեցաւ ինքն եւ ամենայն երուսաղէմ ընդ նմա հանդիմաժողովրդեամբք, եւ կամ զի՞նչ արդ լինելոց է ասեան դատաւորութիւնն դատաստանին նորա, որոյ աղայութիւնն զարհուրեցոյց եւ ապկեցոյց զթագաւորս եւ կամ ի յասելն ցամբոխն զինուորաց թէ «եւ եմ», առ հառապակ, որպէս շանթանարս եղեալ, յետս յետս չոքան եւ զարկան զգետնի, ապա զի՞նչ արդ հանգուր ժելոցք են այնոքիկ յերեսաց դատաւորին, զոր ոչինչս համարեցան

զրան և ձայն նոր և թրեւ զպիրքն ուսուցանողք օրինաց և ճանաչողք իրաւանց ի ձեռն անաչառ խորհրդոց իւրեանց ցուցանէին զինքեանս անաչառս և իրաւաւէրս, ցանկային և ակնչային երեսիլ յաչս մարդկանց օրինապահս և բարեպաշտս, որք ի ներքոյ էին լի՝ նենդութիւն և խարդախութիւն, որպէս ոմանք ի դարու և ի ժամանակի մերում, որք և թէպէտ ի յամենայն գործողութիւնս պարծէին, որ իր անաչառք էին զամենայն խորհուրդք զոր առնէինն, և ըստ ամենայնի արդար և առանց ակնառութեան, զի իբր ի փաստ Աստուծոյ և վասն օգտի հասարակութեան ասէին և խոստովանէին այսպէս և այնու ցուցանէին զինքեանս, զի իբր խորհուրդք իւրեանց էին ըստ ամենայնի արդար և ճշմարիտ, սակայն, բոլորովին էին նենգութիւն և խարդախութիւն և ըստ ամենայնի ակնառութիւն և քննախնդրութիւն, վկայելով միմեանց բանից և հաստատելով զաստիճակնն իւրեանց, և զայս բան առնէին միշտ ի բերանս թէ (մեր անաչառ խորհուրդն, զոր առնեմք, ոչ վասն այլոյ իբիք, եթէ ոչ վասն օգտի հասարակութեան)։ որ և զայս առաւել վասն օգտի իւրեանց և վասն յառաջացողեանելոյ և արգիւնաւորելոյ զիւրեանց քննախնդրութեան և վրիժառութեան առնելով զայս գործիքս ի ձեռն իւրեանց և այնու առնէին զվրէժ և ձգէին ի գուք և ի յորդգայթ և այնու հետեւ հրճուէին և ուրախանային ի վերայ յայնմ անկեղծին և պանծային ի լուսն հասարակութեանց, բայց ո՛չ երբեք ի միտս առնուին և ոչ լսէին զրան Առաքելոյն, զոր ասէ թէ «յաւուրն դատաստանի, յորում դատիցէ Ած զամենայն զաղանիս մարդկան»։ զի դուք, ո՛վ բարեպաշտք ամերայք և յառաջագէժք կոչեցեալք, վասն զի պարծիք և իբր յեցեալք ի յօբէնս և ի պատուիրանս յածայինս, որ իբր զիտեղով զամենայն կամս նորին, առնելով զընտրողութիւնս ի մէջ լաւին և վատթարին զանազանելով և որբադրութիւնս առնելով զքարոզս և զքարոզութիւնս քարոզչաց և ջանաք զի զպակասութիւնս և զբիծ իմն որոնէք և հետադռնէք և իբրեւ զխրատիչ և ուսուցիչք օրինաց ցուցանել վստահանաք ի յանձին ձերում, միշտ կամիք լինել առաջնորդք կուրաց, որպէս համարելով զայս ամենեքեան կուրացեալս և մոլորեալս և կամ որպէս կամիք լինել լոյս ազգին ձերոյ և լուսաւորել զամենայն աղանդովն ձերով, կամիք լինել խրատիչս ամենայն անխրատից և կամ որպէս վարդապետս աղայոց՝ համարելով զնոսա աղայացեալս և տխմարս, Պարծէիք զի իբր առնէիք զկերպարանս ամենայն գիտութեանց և անպաշտութեանց, ճանաչօք ճշմարտութեան և ուսուցանել ամենից այլոց, բայց, դուք ամենեւին ո՛չ ուսալք և ոչ կամէիք ուսանել, այլ միայն հրամայել և հարկադրել լինել գիտէիք, բայց լուարութիւն զի՞նչ ասէ բանն։ «զի որ ասես չչնալ» և այլն որ զկնի, զի անաւասիկ պոսնկեցաք և ուխտադրոյժս դատանեցաք ի բանս և ի խորհուրդս ձեր, զի ըստ ասից Նսայեայ, «զի՛ արդ եղեն պոսնիկք» հաւատարիմքն և ճշմարտախօսա-



միջադեպ եւ անաշատ խորհրդոց խորհրդականք . որք ցուցանէին զինք-  
եանս լի՛ հաւատովք, առ յորս էին հանդուցեալս եւ զամենայն արդա-  
րութիւնս առ յինքեանս ժողովեալք . զի ըստ որում էին արդարք ի կշի-  
ռքս եւ հաւասարաբաշխ ի յամենայն իրս . բայց խաղախութիւն . զի ըստ  
որում ծառայեն կշռոց մեծաց եւ փոքունց , որ ըստ բանի պիղծս կոչի ,  
խառնելով զսուտ ընդ ճշմարտութեան , արծաթք իւրեանց անփորձք , ա-  
պրտամբեցեալք ի յարգարութենէ , խորհրդակիցք ընդ անաւերց , սիրելի  
զկաշատս զօշաքաղութեան , վրիժագործ ի յամենայնս , որք որբոց եւ  
այրեաց ո՛չ առնել զիրաւունս եւ որք առնեն չափն թոյլ առնել եւ ո՛չ  
լինին ունկնդիրս , զոր ի սոցանէ յոմանց բանադրեցեալք լինէաք , զոր  
զբազում նեղութիւնս եւ զչարչարանս կրեալ լինէր . որ զայս վասն ո-  
մանց իրկութեանց ( = իրքութեանց ? ) որ վերաբերիւր ի վերայ աւսն-  
դութեան եկեղեցւոյ , որ էր ըստ ամենայնի ընդդէմ կրօնի քրիստոնէա-  
կանի եւ հաւատոյն Գրիստոսի :

Վասն զի նախ ի վերայ խաչից եւ պատկերաց , որք ի յեկեղեցիքն ,  
զի յոյժ դէմ երեւէր եւ ներհակ զբազմութիւնս նոցա . ուստի պատճառ  
բերելով թէ տէրութիւնք վասնորոյն ո՛չ տան հրամանս չինելոյ զեկեղե-  
ցիս , զի դնեն անդ զբազում խաչս եւ զպատկերս , որ է նշան կոապաշտու-  
թեան ասելով , այսու համոզէին զմիամիտս ժողովրդոց . երկրորդ՝ առնէին  
զնախատակոծս յանդիմանելով եւ ասէին , եթէ զի՞նչ է այս ամբութիւն  
կապի պսակին (1) , զոր ամբացուցեալ են այսքան խոտութեւ . վա՞սն էր  
ոչ լինելից թոյլատրութիւնս , զի նոքա որք ահաճս են վասն իմիք պատ-  
ճառի , թողուցուն զայնպիսին ի յիւր կամս , զի կարիցէ առնուլ զայլ որ ,  
զի մի՛ մնացեն աշնուականք անսերունդ եւ անժառանգ . երրորդ՝ հար-  
ցունն նոցա այսպէս . Հայր Սուրբ , բոլոր սեռք մարդկայն , որք ի պատ-  
կեր Աստուծոյ արարեցեալք , մի՞թէ սոքա ամենեքեանք աղք եւ աղինք ,  
որ կան ի յաշխարհի , սոքա ամենեքեան ի կորուստ մատնելոցք իցեն ի  
դժոխս . ըստ որում պատկեր Աստուծոյ անուանեալ են , որ առ այս ասու-  
եալ զայս պատասխանի . «որ մկրտեսցի կեցցէ եւ որ ոչն հատաստցէ դա-  
տապարտիցի» . վասն այսպիսեացն զի՞նչ ասէ . վա՞յ ձեզ հօրք , զի ո՛չ  
դադարեսցի բարկութիւն իմ եւ արկից զձեռն իմ ի վերայ ձեր եւ ամից  
ձեզ զեռանդն ապստամբեցելոցդ եւ կորուսից եւ բարձից ի ձէնջ զամե-  
նայն անօրէնս եւ խորտակեսցին , ոյք թողին զուխտս եւ զվկայութիւնս  
իւրեանց . որք զարչէին ի մեհնեացն զսեղանս կողոպտեցին , զի անա-  
շատ խորհրդոցն խորհրդականքն եւ արդարակշիռք որք ի վաստակս իւր-  
եանց , որք ի ցոյցս մարդկանց , թէպէտ քամէին զմիջոցս , սակայն  
զմեծամեծ զուգոս կլանէին եւ ըստ կամաց իւրեանց աային վճիռս այսու  
կերպիւ եւ ասէին թէ եկեղեցականաց արդիւնքն եւ վաստակն մի՞թէ ի

(1) կապ ի պսակին ?

յիւրեանց հօր տնէն բերեալք իցեն . ո՞չ ապաքէն բոլորքն ելեալք են ի քսակէ ժողովրդոցն , որք տան նոցա հանապաղ . վասն որոյ ըստ զիտման նոցա տալով զվճիռս եւ ըստ կամաց իւրեանց առնելով զգառաստանս եւ աշխուհեաեւ առանց խղճմտանաց մաքրազարդեալ սեփականէին առ յինքեանս . որպէս որ եղև . ի քանիցս անգամ . բայց առ յայն զայս ասելի է . զի ըստ որում ինքն Աստուած հօնն զինքն զբաժին զօրականացն , ուստի այժմուս խղճալի եւ ողորմելի եկեղեցականք , որք ի բոլոր կեանքս իւրեանց անյուշանեն թաղմակերպ վիշտս եւ մեծաւ տառապանօք թափելով զբրտունս եւ զլոյս ի յաչացն՝ հազիւ հազ պատրաստեն զհօգեպահիկս , որք եւ զնոյնն կողոպտեն եւ յափշտակեն ի ձեռաց եւ աշխպէս թողուն զնոսա միջաբեկեալս լինելով մօրացիկս եւ կարօտ մաղթանաց այլոց :

Սոքա՛ որք երբեմն հարկադիրք լինէին հաւաքել զողորմութիւնս ի յանուն աղքատաց , բայց զկնի առնուն եւ սեփականէին ի յինքեանս , որպէս եղև ի հրկիշութենէ՝ ազատողաց պատճառաւ հաւաքեցաւ , զոր յաւելորդն նորին առին ինչեանք բարեպաշտօնք եւ վասն պիտոյից իւրեանց մսխեցին ուր եւ կամեցան , եւ զայսն ըստ սոյն կերպի :

Պանծային ի վերայ պերճաշքութեանց իւրեանց . զի յորժամ զայլ ոք խոնարհեալք ողջունիցէին զինքեանս , յայնժամ բարձրամտէին եւ համարէին զինքեանս որպէս զերկինս , առ յայս ասի բերանով մարգարէին . ո՛վ դուք , այժմ զի՞ ելիք ի տանիս նախորթեան . զի ահա լցեալք եւ զէք գութկանօք դուք պերճացեալքդ . ի՛՛ վերաւորք ձեր , ո՛չ վերաւորս սուերի . այլ՝ է սուր անային . որ ելանէ ի բերանոյնս Անափառէին ի վերայ ընդունայն փառաւորութեանց , ջանային եւ յղձային զի ընկալնուցուն զփառս եւ զգովութիւնս ի մարդկանէ , երեւել ընտիր եւ մաքուր ի յայս ալոց հասարակութեանց . բայց վասն այսպիսեաց զինչ ասէ Տէրն , զի որ սուրբ է առաջի մարդկան , պիղծ է առաջի Աստուծոյ , Հրճուէին եւ ուրախանային ի վերայ յայնմ . զի յորժամ մինչ անգանիցէին զմի ոք , մա՛նաւանդ զեկեղեցականս եւ զքահանայս եւ ա՛յնքան որ թէ եպիսկոպոսունք եւս լցէին լեալք , որք ի ժամանակի կատաղի բարկութեան իւրեանց անարդէին , անդոսնէին եւ հայոյէին եւ մինչեւ զշունս կոչէին , որպէս երբեմն կաթողիկոսացն իւրեանց ասէին զնոյնն . որ զայս բազում անգամ ականջալուր եւո հմք : Յնծային եւ խայտային ի մեծարանելի իւրեանց ի վերայ ալոց տկարաց եւ անզօրից , խրոխտանալով ի վերայ եւ իբրեւ զգազան արձակեալք իբր թէ կամէին գիշատել :

Ի գնայն իւրեանց ի ժամատունս աղօթից , զիտէին եւ ընտրէին զտեղիս յատուկս եւ զառանձինս վասն իւրեանց , եւ որպէս զայն փառեկացին՝ մեծամեծ բարբառելով եւ ամբարտաւանութիւն իւրեանց դուհանալ ի վերայ ամբարտաւանութեանց եւ պարծել եւ համարել զինքեանս



գերադանց քան զայլս, կոչելով զնոսա զյափշտակողս, զանիրաւս, զնու-  
նըս կամ զայլս ի մարդկանց, այլ պարծիլ ի վերայ պահեցողութեանցն,  
որ Աստուած գիտէ, պարծիլ ի վերայ ողորմութեանց, որք տան ի ցոյց  
մարդկանց, հարկանել զփողս առաջի, ի ժամ պատարադի հանուել զառ-  
կոսիս մամոնայից՝ խորհելով եւ միտ ածելով զայն թէ արդեօք զո՞վ  
խլիցեմք եւ կամ զո՞ր զըպարտիցեմք, զոր աշպիտի արժանաւոր եւ  
լի՞ արդեամբն եւ բաւական թոշակօք վերադառնան ի տունս եւ ընդ  
այնու շատանան, յաղին եւ զմայլին, որ զայս լիալիր Ասկայն զի՞նչ  
ասէ Տէրն, լուարուք եւ ի միտ առէք, որ խօսի, վա՛յ ձեզ, որ յաղ-  
եալքդ այժմս, զի քաղցիցիք եւ ի կարօտութեան միտաջիք ի տեսու-  
թենէ փառացն Քրիստոսի, որովհետեւ արհամարողք եղէք փոքրագունից,  
զորոյ հրեշտակք նոցա հանապաղ տեսանեն զերես հօր իմոյ, որ ի  
յերկինս:

Սոքա ըստ նմանութեան յայնմ քարշէին որպէս զերրորդ մասն  
յերկինից բարուք իւրեանց եւ երկիւղիւ եւ դաւաճանութիւր, որք էին  
քաղցրաբանութիւնք ի բերանս, որովք խաբեն, մահաբեր չեղի ի բե-  
րանս, սուտ ծիծաղումն ի յերեսս եւ դործք մահատիթո, որովք եղծա-  
նեն, որք ըստ ընթացիցն նոցա բազումք ընթացողք եւ նետուողք  
շաւղաց եւ գնացից, որք մի զկնի միոյ ի միում դարու եւ ի միում ժա-  
մանակի հետզհետէ հարկանելով զինքեանս առ վէմս, առ վեհադոյնս եւ  
առ եկեղեցականս՝ փոխանորդացն Քրիստոսի, հոսեցան եւ փշրեցան եւ  
դարձան ի հող եւ ի փոշիս, որք ըստ ասից, «նենգաւորք մի՞ հոռա-  
րակեացին զաւուրս իւրեանց», ուստի փութով վերջացան, որք ոչն  
երեւին տեղի իւրեանց, իսկ նոքա որք օրհնեցին եւ օրհնին միաշա-  
մայն զՏէր միամտութեւ սրտի, երկնչելով ի բանէն Աստուծոյ, ժառան-  
գելով ժառանգեացեն զերկինս եւ զերկիրս:

Յատկագոյն ունակութիւն իմն է, որ կայ ի մէջ ազգին միւրոյ հա-  
սարակաց, զի յսկզբանն իւրաքանչիւրք ջանս եղեալ զի անդամ եւ ի ի  
նախ լինիցին մղսեսի ոմն, ապա զոնեայ եղանիցին եկեղեցեաց եկե-  
ղեցպանս, իսկ զկնի, անուանեցեն իրրեւ զազնուատոճմս եւ տուն կո-  
չել զինքեանս իրրեւ զյառաջագէմս եւ կամ զամիրայո ի մէջ ազգին,  
լինելով բարձրաթիւս իրրեւ զարծիւս եւ կամ որպէս թէ զսիրամարդս,  
զի վառիցեն նախանձու մեծաւ եւ այնու գոռողանայցեն ի վերայ փոք-  
րագունից, խղճացելոց եւ տկարացելոց, ընթանայցեն անդաճեմ ընթա-  
ցիւք, գեղեցիկ եւ փայլուն փետրօք եւ կամ որպէս օսկեղոյն հանդի-  
ծիւք՝ ի յանդիման արեգական, այսինքն՝ տալի եկեղեց, ոչն եւ եկե-  
ղեցականացն՝ կացեալք տարածեն շիկաւփիւռ զփետուր անափառութեան  
եւ ամբարտաւանութեան, զուարճանան եւ պանծան ի վերայ սնտաի փա-  
ռաց եւ ճոխութեանց իւրեանց, արձակելով զանաղան օղտօղտ ճճնա(?)  
գործոց եւ գործողութեանց, եւ այնպէս փքացեալս ի վերայ ունայնական